ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՄՆԱՑՈՐԴԱՑ, ԵԶՐԱՍԻ, ՆԵԵՄԻԱՅԻ ԵՎ ԵՍԹԵՐԻ ԳՐՔԵՐԻ ԲՅՈՒՐԵՂԱՑՈՒՄ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

ՀԱՆԳՈՒՅԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հին Կտակարանի տասներկու պատմական գրքերի
(Հեսուի, Դատավորաց, Հռութի, Ա և Բ Թագավորաց, Գ և Դ Թագավորաց,
Ա և Բ Մնացորդաց, Եզրասի, Նեեմիայի և Եսթերի)
խորքային նշանակությունն այն հայտնությունն է, որ Աստծու շարժումը
մարդկային պատմության մեջ ճանապարհ է հարթում,
որպեսզի Աստված իրականացնի Իր հավիտենական տնտեսությունը՝
դառնալով մարդ, որպեսզի մարդը դառնա Աստված կյանքով և բնությամբ
(բայց ոչ Աստվածությամբ), եկեղեցին՝ որպես Քրիստոսի օրգանական
Մարմինը առաջացնելու և կառուցելու համար, որն ավարտունացնում է
Նոր Երուսաղեմը Նրա վերջնական արտահայտության համար:

Եզրասը վերակազմեց Իսրայելի ժողովրդին
երկնային ճշմարտություններով.
Տիրոջ վերականգնման մեջ մեզ «եզրասներ» են անհրաժեշտ՝
քահանայական ուսուցիչներ, որոնք շփվում են Աստծու հետ,
որոնք հագեցած են Աստծով, որոնք մեկ են Աստծու հետ, որոնք լցված են
Աստծով և որոնք հմուտ են Աստծու Խոսքում.
նման մարդը որակավորված է վերականգման մեջ ուսուցիչ լինելու:

Մենք պետք է ապրենք Քրիստոսով և Քրիստոսին
դրսևորենք մեր կյանքով՝ այդպիսով մեծարելով Քրիստոսին,
որպեսզի կարողանանք կառուցել եկեղեցին՝
որպես Աստծու արտահայտությունը.
Աստծուն արտահայտելու համար մենք պետք է
ամեն օր սրբացվենք ու նորոգվենք խոսքում եղող ջրի լվացմամբ,
որպեսզի ներկայացվենք Քրիստոսին՝ մեր Փեսային,
որպես Նրա մաքուր, փառավոր, Աստծուն արտահայտող հարսը:

Եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի կառուցման համար
հոգևոր պատերազմի անհրաժեշտություն կա, որն իրականացվում է
չորս սկզբունքների համաձայն.
չօգտագործել մսեղավոր զենքերը, պահել համբարձման դիրքը,
օգտագործել հոգևոր զենքերը, որոնք զորավոր են՝
թշնամու ամրությունները խորտակելու համար,
և հասկանալ, որ աղոթքը պատերազմ է, ու արտաբերել
պատերազմի աղոթքներ երկնային ոլորտում ու Աստծու գահից:

© 2022 Living Stream Ministry

Առաջին հաղորդում

Աստծու շարժումը մարդկային պատմության մեջ Աստծու հավիտենական տնտեսությունն իրականացնելու համար

Գրվածքների ընթերցում. Զք 1:3, 18-21, 2:1-2, 5, 8-9, 11, 6:12-13, 10:1, 3, 8, 12, 11:7, 12:1, 10, 14:5, 9

I. Հին Կտակարանի տասներկու պատմական գրքերի (Հեսուի, Դատավորաց, Հռութի, Ա և Բ Թագավորաց, Գ և Դ Թագավորաց, Ա և Բ Մնացորդաց, Եզրասի, Նեեմիայի և Եսթերի) խորքային նշանակությունն այն հայտնությունն է, որ Աստծու շարժումը մարդկային պատմության մեջ ճանապարհ է հարթում, որպեսզի Աստված իրականացնի Իր հավիտենական տնտեսությունը՝ դառնալով մարդ, որպեսզի մարդը դառնա Աստված կյանքով և բնությամբ (բայց ոչ Աստվածությամբ), եկեղեցին՝ որպես Քրիստոսի օրգանական Մարմինը առաջացնելու և կառուցելու համար, որն ավարտունացնում է Նոր Երուսաղեմը Նրա վերջնական արտահայտության համար.

Ա. Մենք պետք է Հին Կտակարանի պատմության տասներկու գրքերը կապենք Աստծու հավիտենական տնտեսության հետ. Աստվածաշունչն իրականում միայն մեկ բանի մասին է խոսում՝ Աստծու հավիտենական տնտեսության, որը հիմնված է Աստծու բարեհաճության, Նրա սրտի ցանկության վրա (Եփս 1:4-5, 9-10, Ա Տմթ 1:3-4, 6:3). այս տասներկու պատմական գրքերը գրվել են Աստծու աստվածային հայտնության լույսի ներքո՝ մեզ խրատելու և լուսավորելու համար (Ա Կրթ 10:11):

Բ. Աստծու հավիտենական տնտեսության իրականացումը (ներառյալ միջոցը՝ Աստծու իրավական փրկագնումը, և նպատակը՝ Նրա օրգանական փրկությունը), որն ուղղված է մեզ պատրաստելուն որպես Նրա Հարսը՝ Նրան վերադարձնելու համար, աշխարհի այսօրվա իրավիճակի խնդիրները լուծելու միակ ճանապարհն է. սա Աստծու սրտի ցանկությունն է, և Նա կիրագործի սա՝ Հռմ 5:10, 17, 21, Ա Թսղ 5:23-24, Փլպ 1:3-6:

Գ. Տիրոջ երկրորդ գալուստը կլուծի աշխարհի բոլոր խնդիրները, ինչպիսիք են անարդարացիությունը (Եսյ 11:4), պատերազմները (2:4), հիվանդությունները (Հյտ 22:2, Եզկ 47:12), սովը (Եսյ 35:1, 6), կրթությունը (2:2-5, 4:2-6, 11:9, Ամբ 2:14, Եբր 8:11, Սղմ 2:6, 12), մեղսալի հաստատությունները (Մտթ 13:41-43), ամբողջ ստեղծագործության չարչարանքը (Հռմ 8:21-22, Եսյ 11:6, 9) և երկրային կառավարությունները (Հյտ 11:15, Դնլ 2:34-35, 44-45):

II. Զաքարիա մարգարեի գիրքը բացահայտում է, որ մարդկային պատմության մեջ Աստծու շարժման հանգուցային դրույթն ու գլխավոր բովանդակությունը Քրիստոսի երկու գալուստներն են՝ Հիսուսի վկայության՝ Աստծու կառույցի համար.

ԱՍՏԾՈՒ ՇԱՐԺՈՒՄԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա. Զաքարիա մարգարեի գրքի 9–11-րդ գլուխներում խոսվում է Քրիստոսի նսեմացված առաջին գալստյան մասին, ով հեզ էր ու հասանելի.

1. Քրիստոսը եկավ արդար ճանապարհով Աստծու ժողովրդի համար եղող փրկությամբ՝ որպես Թագավոր, բայց որպես խոնարհ Թագավոր, նվաստացած Թագավոր, որ ոչ թե վեհ ձիու վրա էր նստած, այլ էշի, նույնիսկ էշի քուռակի. սա իրականացավ, երբ Հիսուս Քրիստոսը վերջին անգամ Երուսաղեմ մտավ՝ Զք 9:9, Մտթ 21:5-10:
2. Քրիստոսից նողկացին, Նրա վրա հարձակվեցին, Նրան մերժեցին, Նրան երեսուն արծաթով՝ ստրուկի գնով, մատնեց Իր աշակերտներից մեկը (Զք 11:8, 12-13, Ելց 21:32). այստեղ մարգարեացվածը կատարվեց Ավետարաններում (Մտթ 26:14-15, 27:3-10):
3. Քրիստոսը՝ Եհովայի Ընկերը, Իսրայելի զավակների մոտ եկավ որպես Աստծու ուղարկված Հովիվ. որպես մարդ՝ Քրիստոսը միաժամանակ Իսրայելի զավակների ազգականն էր ու Եհովայի Ընկերը. Նա հարվածվեց որպես Հովիվ, իսկ Նրա աշակերտները ցրվեցին որպես ոչխարներ՝ Զք 13:6-7, Հվի 10:11, Մտթ 9:36, 26:31, Հվի 16:32-33:
4. Քրիստոսը վերքեր ստացավ խաչի վրա Իսրայելի տանը, բայց Նա ասաց. «Սրանք այն վերքերն են, որ ստացա Ինձ սիրողների տանը». Իսրայելի զավակները սպանեցին Քրիստոսին, բայց այս քաղցր խոսքում Քրիստոսը նրանց գործողությունը գնահատում է որպես վերքեր Իրեն սիրողների կողմից՝ Զք 13:6-7, 12:10, Հյտ 1:7, Սղմ 22:16:
5. Քրիստոսի կողը խոցվեց, և Նա բաց շատրվան դարձավ մեղքի ու անմաքրության համար՝ Զք 12:10, 13:1, Հվի 19:34, 37, Մտթ 26:28:

Բ. Զաքարիա մարգարեի գրքի 12–14-րդ գլուխներում խոսվում է Քրիստոսի հաղթական երկրորդ գալստյան մասին, որը զորությամբ և իշխանությամբ կլինի.

1. Քրիստոսը երկրորդ անգամ կգա Իր սրբերի՝ հաղթողների ուղեկցությամբ՝ 14:5, Հվլ 3:11, Հդ 14:
2. Նրա ոտքերը կկանգնեն Ձիթենյաց լեռան վրա, որը Երուսաղեմի դիմաց է արևելյան կողմում՝ Զք 14:4, Գրծ 1:9-12:
3. Նա կպատերազմի Իսրայելի զավակների՝ Իր ընտրյալների համար նրանց պաշարած ազգերի դեմ և նրանց կփրկի ոչնչացումից՝ Զք 14:2-3, 12-15, 12:1-9:
4. Այդ ժամանակ Իսրայելի ողջ տունը կնայի Նրան, ում իրենք խոցեցին, և կսգան Նրա համար. այսպես ամբողջ Իսրայելը կփրկվի՝ խխ. 10-14, Հռմ 11:26:
5. Դրանից հետո Նա կլինի Թագավորը, ով կթագավորի ու կկառավարի ազգերին. բոլոր մարդիկ տարեցտարի Երուսաղեմ կբարձրանան, որպեսզի երկրպագեն Նրան, և բոլորը առ Նա կսրբացվեն՝ Զք 9:10, 14:16-21:

6. «Եհովան Թագավոր կլինի ամբողջ երկրի վրա. և այդ օրը Եհովան միակ Աստված կլինի, և Նրա անունը՝ միակ անունը»՝ խ. 9, Սղմ 72:8, Հյտ 11:15:

III. Համաբովանդակ Քրիստոսը մարդկային պատմության մեջ Աստծու շարժման պատմությունն է, որի նպատակն է ձեռք բերել Աստծու կառույցը՝ Աստծու դրսևորման համար՝ Զք 4:9, 6:12-15, Մտթ 16:18, Հվի 1:1, 14, Ա Կրթ 15:45բ, Հյտ 4:5, 5:6, 21:2.

Ա. Այն բանին զուգընթաց, որ մարդկային պատմության մեջ Քրիստոսը վարպետորեն աշխատում է, որպեսզի գերիշխանորեն վերահսկի աշխարհի իրավիճակը, Նա աստվածային պատմության մեջ Իրեն վարպետորեն ներդնում է մեր մեջ, որպեսզի մեզ Իր աշխատանքի գլուխգործոցը դարձնի՝ Աստծու պոեմը, Աստծու նոր հայտնագործությունը, որն արտահայտում է Նրա անսահման իմաստությունն ու աստվածային մտադրությունը՝ Գրծ 5:31, Եփս 2:10:

Բ. Քրիստոսն Իր մարդկայնության մեջ Եհովայի Հրեշտակն է՝ Եհովան Ինքը՝ որպես Եռամեկ Աստված, ով կանգնած է Աստծու ժողովրդի հետ հովտի ամենացածր մասում նրանց նվաստացման ժամանակ, որպեսզի հոգա նրանց համար, բարեխոսի նրանց համար և արագորեն դուրս բերի բաբելոնյան գերությունից՝ Զք 1:7-17, Ելց 3:2, 4-6, 13-15, Եսյ 63:9, Երկ Օր 33:27:

Գ. Քրիստոսը վերջին Արհեստավորն է, ում Աստված օգտագործեց, որպեսզի կոտրի չորս եղջյուրները. չորս եղջյուրները չորս թագավորություններն են իրենց թագավորներով, այսինքն՝ Բաբելոնը, Մարա-Պարսկաստանը, Հունաստանը և Հռոմի կայսրությունը, որոնց խորհրդապատկերում են նաև Դնլ 2:31-33-ի չորս մասեր ունեցող մարդկային մեծ արձանը, Հվլ 1:4-ի մորեխների չորս փուլերը և Դնլ 7:3-8-ի չորս գազանները, որոնք վնասում ու ոչնչացնում էին Աստծու ընտրյալ ժողովրդին՝ Զք 1:18-21.

1. Չորս արհեստավորները այն տարբեր արհեստներ են, որոնք Աստված օգտագործում է այդ թագավորություններն ու դրանց թագավորներին ոչնչացնելու համար. առաջին երեք թագավորություններից յուրաքանչյուրը (Բաբելոնը, Մարա-Պարսկաստանը, Հունաստանը) վարպետորեն գրավվել է իրեն հաջորդող թագավորության կողմից՝ Դնլ 5, 8:3-7:
2. Չորրորդ արհեստավորը կլինի Քրիստոսը՝ որպես առանց ձեռքի օգնության պոկված քարը, ով Իր վերադարձին կփշրի վերստեղծված Հռոմեական կայսրությունը և դրանով իսկ կկործանի մարդկային մեծ արձանը՝ մարդկային կառավարման հանրագումարը՝ 2:31-35:
3. Այդ քարը խորհրդանշում է ոչ միայն անհատական Քրիստոսին, այլև ընդհանրական Քրիստոսին՝ Քրիստոսին Իր «զորավորների» հետ՝ Հվլ 3:11:

Դ. Ընդհանրական Քրիստոսը՝ Քրիստոսն Իր հաղթող հարսի հետ միասին, կգա որպես քար՝ մարդկային կառավարման հանրագումարը փշրելու համար, որպեսզի բերի Աստծու թագավորությունը՝ Դնլ 2:34-35, Հվլ 3:11, Հյտ 19:11-21, հմմտ Ծնդ 1:26:

Ե. Դանիելի մարգարեության 2-րդ գլխում ասվում է, որ Քրիստոսը կգա որպես առանց ձեռքի օգնության պոկված քար, իսկ Հայտնության 19-րդ գլխում ասվում է, որ Քրիստոսը կգա որպես Նա, ով ունի հարսին՝ որպես զորքի:

IV. Եփեսացիներին ուղղված թղթի 5 և 6-րդ գլուխները բացահայտում են, որ եկեղեցին և՛ հարսն է, և՛ ռազմիկը. Հայտնության 19-րդ գլխում նույնպես տեսնում ենք եկեղեցու այս երկու տեսանկյունները՝ Եփս 5:25-27, 6:10-20, Հյտ 19:7-9, 11, 14.

Ա. Որպեսզի լինենք հարսը աստվածային պատմության մեջ, որն Աստծու շարժումն է մարդկային պատմության մեջ, մեզ անհրաժեշտ է Աստծու գեղեցկացնող խոսքը, իսկ որպեսզի լինենք ռազմիկը աստվածային պատմության մեջ, որն Աստծու շարժումն է մարդկային պատմության մեջ, մեզ անհրաժեշտ է Աստծու սպանող խոսքը՝ Եփս 5:26, 6:17-18, հմմտ Բ Տմթ 3:16:

Բ. Իր հարսանիքի օրը Քրիստոսը կամուսնանա Իր Հարսի՝ հաղթողների հետ, որոնք տարիներ շարունակ մարտնչել են Աստծու թշնամու դեմ՝ հմմտ Դնլ 7:25, 6:10, Եփս 6:12:

Գ. Նախքան երկիր իջնելը, որպեսզի վերջ դնի Հակաքրիստոսին ու մարդկային կառավարության հանրագումարին, Քրիստոսը հարսանիք կունենա, որտեղ Նա Իրեն կմիացնի Իր հաղթողներին որպես մեկ ամբողջություն՝ Հյտ 19:7-9:

Դ. Այսպիսով՝ Քրիստոսը՝ որպես Հոգին՝ պատրաստված և ավարտունացած Եռամեկ Աստված, ամուսնանում է եկեղեցու՝ որպես հարսի հետ՝ պատրաստված և փոխակերպված եռամաս մարդու՝ 22:17ա:

Ե. Իր հարսանիքից հետո Նա կգա Իր նորահարսի հետ, որպեսզի ոչնչացնի Հակաքրիստոսին, ով իր զորքով պատերազմելու է անմիջականորեն Աստծու դեմ՝ 19:11, 14.

1. Տեր Հիսուսը՝ Աստծու Խոսքը, Հակաքրիստոսին՝ անօրենության մարդուն, կսպանի Իր բերանի շնչով, և Նա ոչնչի կվերածի Հակաքրիստոսին Իր գալստյան դրսևորմամբ՝ խխ. 11-15, Բ Թսղ 2:2-8:
2. Քրիստոսի բերանից սրած մի սուր է ելնում, որպեսզի դրանով հարվածի ազգերին՝ Հյտ 19:15, 1:16, 2:12, 16:

Զ. Մարդկային կառավարությունը ջախջախելուց հետո Աստված կմաքրի ողջ տիեզերքը. այդժամ ընդհանրական Քրիստոսը՝ Քրիստոսն Իր հաղթողների հետ միասին, կդառնա մեծ լեռը, որը կլցնի երկիրը, և արդյունքում ողջ երկիրն Աստծու թագավորությունը կդառնա՝ Դնլ 2:35, 44, 7:22, 27, Հյտ 11:15:

V. Որպեսզի իրականացվի Աստծու շարժումը մարդկային պատմության մեջ Աստծու հավիտենական տնտեսությունն իրագործելու համար, հարկավոր է վարժել մեր հոգին, որպեսզի փորձառաբար ապրենք ու վայելենք Քրիստոսին՝ որպես յոթնապատիկ ուժեղացված Հոգու՝ 1:10, 4:2, 17:3, 21:10, 4:5, 5:6, Զք 3:9, 4:10.

Ա. Զք 1:3-ում ասվում է. «Ինձ վերադարձեք,– ազդարարում է զորքերի Եհովան,– և Ես ձեզ կվերադառնամ,– ասում է զորքերի Եհովան». մենք պետք է վարժենք մեր հոգին, որպեսզի վերադառնանք Տիրոջը մեր ամբողջ սրտով. սա հաստատում է այն սկզբունքը, որ նախ՝ մենք պետք է վերադառնանք Տիրոջը, և ապա՝ Տերը կվերադառնա մեզ՝ Երմ 24:7, Օվս 6:1-3, 14:1-5, Հվլ 2:13, Ղկս 15:17-24:

Բ. Զք 12:1-ում ասվում է. «Եհովայի խոսքի բեռը Իսրայելի վերաբերյալ. երկինքները տարածող, երկրի հիմքը դնող և մարդու հոգին նրա ներսում ձևավորող Եհովան ազդարարում է».

1. Աստված Իր ստեղծագործության մեջ երեք մեծ և հավասարապես կարևոր բան է ստեղծել՝ երկինքները, երկիրն ու մարդու հոգին:
2. Երկինքները երկրի համար են, երկիրը մարդու համար է, իսկ մարդն Աստծու կողմից հոգով ստեղծվեց, որպեսզի հպվի Աստծուն, ընդունի Աստծուն, երկրպագի Աստծուն, ապրի Աստծուն, Աստծու համար իրականացնի Աստծու մտահղացումը և մեկ լինի Աստծու հետ՝ խ. 1:
3. Մարդու էության «կենտրոնական կառավարությունն» ու ամենանշանավոր մասը պետք է լինի նրա հոգին. իր հոգով կառավարվող ու վերահսկվող մարդը հոգևոր մարդ է՝ Ա Կրթ 2:14-15, 3:1, 14:32, Հվի 3:6, Եփս 3:16, Ա Պտ 3:4, Դնլ 6:3, 10:
4. Զաքարիա մարգարեի գիրքը մեզ պատվիրում է մեր ողջ ուշադրությունը սևեռել մեր մարդկային հոգու վրա, որպեսզի կարողանանք ընդունել այս գրքում բացահայտված Քրիստոսին և հասկանանք այս գրքում Նրա մասին բացահայտված ամեն բան՝ Ծնդ 2:7, Հվի 4:24, Փլպ 4:23:

Գ. Մենք պետք է վայելենք Քրիստոսին՝ որպես յոթնապատիկ ուժեղացված Հոգու՝ հետևյալ տեսանկյուններում.

1. Քրիստոսն այն մարդն է, ով Իր ձեռքում չափալար ունի, որը չափում է Աստծու ժողովրդին, որպեսզի փորձի, դատի, քննի ու տիրի նրանց Իր թագավորության համար՝ Զք 2:1-2, Եզկ 40:3, 47:1-5, Սղմ 139:23-24:
2. «Ես բոլոր կողմերից նրա կրակե պարիսպը կլինեմ,– հռչակում է Եհովան,– և նրա ներսում փառքը կլինեմ»՝ Զք 2:5.
   ա. Այն, որ Երուսաղեմ քաղաքի պարիսպն ու նրա ներսում գտնվող փառքն Ինքը՝ Եհովան է լինելու, ցույց է տալիս, որ Եհովան՝ որպես Քրիստոսը, Երուսաղեմի պաշտպանությունն է լինելու նրա շուրջը, և փառքը՝ նրա կենտրոնում. սա ցույց է տալիս Քրիստոսի

կենտրոնականությունն ու տիեզերականությունը Աստծու տնտեսության մեջ:

բ. Այսօր Քրիստոսը փառքն է եկեղեցու կենտրոնում, նաև եկեղեցու պաշտպանության համար նախատեսված բոցավառ կրակը եկեղեցու շուրջը. Նոր Երուսաղեմում Եռամեկ Աստված Քրիստոսի մեջ կլինի փառքը նրա կենտրոնում (Հյտ 21:23, 22:1, 5), և այդ փառքը կշողա քաղաքի թափանցիկ պարսպի միջով՝ որպես քաղաքի կրակե պաշտպանությունը (21:11, 18ա, 24):

3. Քրիստոսը զորքերի Եհովայի կողմից Ուղարկվածն է, ինչպես նաև Ուղարկողը՝ զորքերի Եհովան, ով հոգում է Իր մարդկանց համար, ովքեր շատ թանկ են Նրա համար. նրանց դիպչողը Նրա աչքի բիբին է դիպչում՝ Զք 2:8-9, 11, հմմտ Հվի 14:26, 15:26:

4. Քրիստոսը եկավ որպես Հովիվը, ով հովվում է իր հոտը երկու ցուպերով. մեկը «Բարեհաճություն» (շնորհք) է կոչվում, իսկ մյուսը՝ «Կապեր» (կապելը). շնորհքը նախատեսված է՝ մեզ Աստծու հետ ձուլելու համար, իսկ կապելը՝ մեզ Նրա հետ որպես մեկ կապելու համար՝ Զք 11:7, 2:1-2, 5, 8-9, 11, Հվի 21:15-17.

ա. Երբ Տերն այսպես բարեհաճ է մեր նկատմամբ, մենք պետք է խնդրենք, որ Նա ավելի շատ բարեհաճություն, ավելի շատ շնորհք, ավելի շատ «անձրև» ուղարկի՝ Զք 10:1, 12:10, Եզկ 34:26:

բ. Տիրոջ՝ որպես Հովվի այցելության արդյունքում Աստծու ժողովրդի մեջ յուրաքանչյուր տկար ոչխար վեհության երիվար է դառնում՝ Զք 10:3, հմմտ 9:13, 16, Դնլ 11:32բ:

գ. Հաճախ մեր առավոտյան արթնացման ժամանակ Տերը սուլում է՝ մեզ կանչելով ու հավաքելով Իր մոտ. Տիրոջ սուլոցը կտրուկ չէ, այլ նուրբ և մեղմ է. այն թռչունների երգ է հիշեցնում՝ Զք 10:8:

դ. Տերը մեզ ամրացնում է Իր մեջ, որպեսզի մենք Իր անվան մեջ քայլենք՝ խ. 12, Կող 3:17:

VI. Մարդկային պատմության մեջ Աստծու շարժման՝ որպես աստվածային պատմության հետ կապված է նոր ստեղծագործությունը՝ նոր մարդը նոր սրտով, նոր հոգով, նոր կյանքով, նոր բնությամբ, նոր պատմությամբ և նոր ավարտունությամբ հանդերձ. մենք գոհանում ենք Տիրոջից, որ աստվածային պատմության մեջ ենք գտնվում, փորձառաբար ապրում ու վայելում ենք առեղծվածային, աստվածային բաները մեր օրգանական փրկության համար, որպեսզի պատրաստվենք դառնալու Նրա հաղթող հարսը, որը կվերադարձնի Նրան՝ Օրհներգ 12, Հռմ 5:10, 17-18, 21, 6:4, Եզկ 36:26, Բ Կրթ 3:16-18, Մտթ 5:8, Տտս 3:5, Եփս 5:26-27, 6:17-18, Հյտ 19:7, Մտթ 24:44, 25:10:

© 2022 Living Stream Ministry